և ջանքով կ'ուսուցանեն և ոչ թէ լոկ պօռալու և պօռացնելու համար, ինչպէս է մեր դպրոցներուն մէջ։ Նախ կը բացատրեն, կը հասկացնեն երգի իմաստն ու ոգին և ապա եղանակն կ'ուսուցանեն։

Ֆիզիքական կամ մարմնաւոր զօրութիւնն զարգացնելու համար անհրաժեշտ կարեւոր է մարմնամարզութիւն, հրացանի կրթութիւնն և լաղացումն, որոնք ուսման յատուկ ճիւղ կը կազմեն և կանոնաւորապէս կ'ուսուցուին։ Բայց պէտք է ասել, որ մարմնամարզիկ ուսումն այն երկիրներու կամ այն դպրոցներու մէջ աւելի կարեւորութիւն ունի, ուր աշակերտք շատ զբաղմունք ունին, մտաւորական շատ աշխատանք ունին, ուր դպրոցն իսկապէս դպրոց է և ոչ խաղարան։ Մեր ազգային դպրոցներն, իրենց ներկայ դրութեամբ, սակաւաթիւ բացառութիւններէն զատ, այնչափ կարօտութիւն չունին մարմնամարզութեան, վասն զի մեր դպրոցներու աշակերտներն գրեթէ ինքնուս մարդիկներ են, որոնք դպրոց կը գան աւելի խաղալու, իրար մարզելու, ծեծելու և ծեծուելու համար քան թէ մտաւորապէս աշխատելու և ուսանելու։

Երբ մեր դպրոցներու ներկայ դիրքն փոխուի, այն ժամանակ անհրաժեշտ կարեւոր է մարմնամարզութիւնն եւս ուսման սերտ յարակից ճիւղ նկատելի. վասն զի մարմնամարզութիւնն, նոյն իսկ 'ի հնումն, այնչափ մեծ նշանակութիւն ունէր, որ հին Յունաստանի մէջ, ոչ միայն քաղաքացիք, այլ յաւէտ փիլիսոփայք և բանաստեղծք օրուան մի մասն մարմնամարզիկ կրթութեանց կը զոհէին և հրացան գործածել ու լաղալ չի մացողն անարի մարդկանց կարգն դասուած էր։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ա. Պ. Բ. Ա. — Ձեր ղրկած յօդուածն ստացած չէ Խմբագրութիւնս։ Եթէ օրինակն ունիք, կարող էք վերստին ղրկել և կը խոստանամք գոհութեամբ հրատարակել։ Ի բոլոր սրտէ կը փափաքիմք մանրամասն տեղեկութիւններ ունենալ այն մեծախորհուրդ բարերարութեան մասին, որով Ռուսաստանցի Ազգասէր մի կամեցած է Տաճկաստանի մէջ Վարժարան կառուցանել և հաստատուն եկամուտներով նոյն Վարժարանի ապագայն ապահովել։ Մեծ ուրախութիւն է այնպիսի մի ազգային հաստատութեան գոյութիւն Տաճկաստանի մէջ, և անշուշտ ամէն պարագաներ կան խաւ խորհուած, տնօրինուած և պատրաստուած են։

Ահա նշանաւոր գործ, որուն վերայ Ազգային Վարչութիւնն կարող է դարձնել իւր խորին ուշադրութիւնն և պտակել այն Բարերարի կամքն, որ լիովին հասկցած է՝ թէ լոյս տարածել, լուսոյ ծաւալման համար զոհողութիւններ անել՝ ամենէն մեծ Բարերարութիւնն է այժմ և առ յապագայն։

Ձեր յօդուածն մեզ հասած չէ, որ հիմնաւոր տեղեկութիւն ունենամք այս մասին և Ազգային պարբերական նաց հրատարակութիւններն եւս մանրամասն ծանօթութիւններ չեն պարունակեր։ Երբ յաջողիմք ձեր յօդուածն ստանալ և կամ որ և իցէ եղանակաւ ամէն հանգամանաց հասու լինիլ, այն ժամանակ անշուշտ մեր խմբագրական խորհրդածութիւնն եւս չեմք զլանար, զոր դուք ժամանակէն առաջ այժմ կը պահանջէք մեզմէն։

Եթէ լոկ նպատակին վերայ խորհրդածեմք, տարակոյս չկայ, որ շատ և շատ դեղեցիկ է։ Բայց թէ ինչ

digitised by A.R.A.R.@

պայմաններ կան, որ աստիճանի միջամտութիւն պիտի ունենայ Ազգային Վարչութիւնն. Դպրոցի Ներքին շինութեան ձեռնամուխ լինելէն զկնի՝ ինչ խորհրդներ պիտի յղանայ և ինչ հիմունքներու վերայ պիտի հաստատէ բարոյական շէնքն։

Այս գլխաւոր պայմաններ, որոց դիտութիւնն տակուին անծանօթ է մեզ։

Խմբագրութիւնս կը խնդրէ յատկապէս, որ Ձեր ունեցած տեղեկութիւններն հաղորդէք փութով, ատոյգ աղբիւրներէ քաղելով։

Գիտէք Դուք, որ շատ անգամ ատոյգ հրատարակութեամբ նպատակներն կերպարափոխ կը լինին։

Անշուշտ կը յիշէք, որ քանի մի տարի առաջ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսն ևս, ի Պոլիս, Պերայի մէջ, լքբեւ թէ մի Հայու ծախիւք, վարժարան կ'ուզէր կ'առուցանել, որոյ նպատակն, թէեւ գովեստիւ հռչակուեցաւ, բայց անխառն չէր քաղաքական դիտումներէ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

ՅՈՒՆԱՑ Ներքին Պատրիարքն քաղաքս ժամանեց, որուն դիմաւորեցին բոլոր Վանուց և Հիւպատոսարանաց Թարգմաններն պահակներով (եասախներով) հանդերձ։ Խաղոլոգեան խուռն բազմութիւն քաղաքէն արտաքոյ Ճանապարհին վերայ կըսպասէր նորեկ Պատրիարքի հանդիսաւոր մուտքն տեսնելու համար։ Հանդիսատես բազմութեան մէջ չը կային ամենեւին Յունադաւան տեղացի ժողովուրդք, վասն զի նոքա տակաւին այն համոզումն ունին, որ Պատրիարքն առանց իրենց մասնակցութեան ընտրուած է, ուստի և իրենց համար չէ։ Յոյն Միաբանութեան անդամներէն շատերն ևս, մանաւանդ այնպիսիք, որոնք պատրիարքանալու ձգտումներ և կամ այլ ընտրելիներ ունէին, բնաւ գոհ չեն ներկայ Պատրիարքի ընտրութենէն և այնպէս կը դուշակեն, որ սակաւ ժամանակէն զկնի՝ դարձեալ յուզումներ պիտի ծագին։

Բաղաքիս Վ. սեմ. Ռդէշեան, արդէն օգափոխութեան համար կանխաւ ի Յոպպէ գտնուելով իւր Սեմ. եղբօր հետ, Տէրութեան կողմէն ընդունելութեան և Յոպպէէն Այրուսաղէմ ուղեւորութեան ամէն արժանավայել պայմաններն անօրինած էր։

Մայս 29 ին առաջիկայ կիւրակի օրն, ի Յունական տօնի առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, Նորընտիր Պատրիարքին եպիսկոպոսութեան աստիճան պիտի տրուի և յետ այնորիկ Կայսերական Հրովարտակն պիտի կարդացուի։

Պատրիարքական գահն բարձրանալու համար ամենայն ինչ կատարուած է մինչեւ ցարդ, այսուհետեւ Նորընտիր Պատրիարքի խոհեմութեանն կը մնայ ժողովրդեան և միաբանութեան տժգոհ մասին համակրութիւնն գրաւել և իւր փափուկ պաշտօնն խաղաղութեամբ շարունակել։

— Բէթլեհեմի Ս. Ծննդեան այրին մէջ, Լատինաց պատարագի ժամանակ, մեր պատկերներէն մին ընկնելով զքանակներն խորտակուէր էին։ Լատինաց լուսարարն յատկապէս նեղութիւն խնդրած էր մեր Տեսչէն, որ պատկերն ինքնին ընկած է և ոչ թէ Լատինք ձգած են։ Մեր Տեսուչն ուճապարելով նոր պատկեր մի

digitised by A.R.A.R.@